

## ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

### Հայաստանում դեսպանների և միջկառավարական կազմակերպությունների ղեկավարների հայտարարությունը

Ընտրությունների հարցերով զբաղվող միջազգային աշխատանքային խումբը ստեղծվել է 2002թ.՝ ընտրությունների աջակցման գործընթացում ներգրավված միջազգային կազմակերպությունների և Հայաստանում գտնվող դեսպանատների միջև տեղեկատվության և փորձի փոխանակման նպատակով: Խումբը կանոնավոր կերպով խորհրդակցություններ է կազմակերպում: Խմբի աշխատանքները համակարգում է ԵԱՀԿ Երևանի գրասենյակը:

Աշխատանքային խմբում ներգրավված դեսպանները և միջկառավարական կազմակերպությունների ղեկավարները հանդիպեցին մարտի 9-ին՝ 2007թ. և 2008թ. կայանալիք խորհրդարանական և նախագահական ընտրությունների նախապատրաստական աշխատանքներում Հայաստանի առաջընթացի վերաբերյալ տեղեկություններ փոխանակելու նպատակով: Հանդիպման մասնակիցները համաձայնեցին հետևյալի շուրջ.

Մասնակիցները նշեցին ՀՀ իշխանությունների կողմից արդեն իսկ ձեռնարկված քայլերը, այդ թվում՝ ընտրացուցակների ճշգրտման ուղղությամբ իրականացված աշխատանքները, ընտրական հանձնաժողովների անդամների ուսուցման նախաձեռնումը և առկա ընտրական օրենսգիրքը վերանայելու նախապատրաստական քայլերը:

Մասնակիցները նշեցին, որ եկող ու դրան հաջորդող տարվա ընթացքում տեղի ունենալիք ընտրությունները անց են կացվելու նոր պայմաններում, քանի որ սահմանադրական հանրաքվեով վերափոխվել է պետական կառավարման համակարգը: Մասնակիցները ողջունում են այդ փոփոխությունները՝ համարելով, որ ընդհանուր առմամբ դրանք առաջընթաց են հանդիսանում Հայաստանի համար և շտկում են նախկինում գործող սահմանադրության մեջ առկա մի շարք թերություններ:

Միևնույն ժամանակ, հիշատակվեցին նախորդ ընտրությունների ժամանակ տեղ գտած թերությունները և աշխատանքային խմբի անդամներից շատերը նշեցին, որ նոյեմբերին կայացած սահմանադրական հանրաքվեի քվերակության ընթացքին հետևելու նպատակով հրավիրված միջազգային դիտորդների եզրակացության համաձայն՝ գործընթացն ուղեկցվել է լուրջ խախտումներով: Հայաստանի իշխանությունների մի շարք ներկայացուցիչներ ընդունել են, որ ակնհայտ են եղել բազմաթիվ թերացումներ, որոնք ստվեր են գցել ընտրական գործընթացի վրա:

Ելնելով այս հանգամանքներից՝ աշխատանքային խմբի անդամները համաձայնեցին, որ գալիք ընտրությունները վճռորոշ են լինելու Հայաստանի սպագայի համար: Նրանք գտնում են, որ քաղաքացիների կողմից արդար կերպով ընտրված, և ժողովրդի կողմից այդպես ընկալվող, իշխանությունները ոչ միայն կարևոր են արդար հասարակության համար, այլ նաև անհրաժեշտ գործոն են քաղաքական կայունության, ազգային անվտանգության և տնտեսական զարգացման համար: Արդար և բաց ընտրական գործընթացը հանդիսանում է նաև Հայաստանի միջազգային պարտավորություններից մեկը: Մասնակիցները ողջունում են ՀՀ մի շարք պաշտոնյաների կողմից արված այն հայտարարությունները, ըստ որի ՀՀ կառավարությունը քայլեր է ձեռնարկում՝ ապահովելու, որպեսզի անցյալում արձանագրված թերությունները չկրկնվեն:

Հանդիպման մի շարք մասնակից կառավարության կողմից իրենց աջակցության օգտակար լինելու մասին հայտարարություններից հետո, հայտնել են համապատասխան աջակցություն ցուցաբերելու իրենց պատրաստակամությունը: Նրանք, մասնավորապես, նշեցին ընտրական հանձանաժողովների անդամների ուսուցմանը աջակցելու կարևորությունը, ընտրական օրենսգրքի հնարավոր փոփոխությունների հետ կապված փորձաքննության տրամադրումը, ընտրացուցակների բարելավումը և ազատ ու արդար ընտրություններ կազմակերպելու համար անհրաժեշտ ընթացակարգերի վերաբերյալ հանրության իրազեկմանը ուղղված աշխատանքները: Հանդիպմանը շեշտվեց անհրաժեշտ աջակցության տրամադրման գործում օտարերկրյա կառավարությունների և միջազգային կազմակերպությունների հնարավորինս շուտ ընդգրկման կարևորությունը՝ հաշվի առնելով ընտրական գործընթացների բարդությունը և աջակցության ծրագրերը մշակելու ու համակարգելու համար պահանջվող ժամանակը:

Մասնակիցները նաև հույս հայտնեցին որ ՀՀ կառավարությունը հնարավորության դեպքում այս գործընթացում կներգրավի քաղաքացիական հասարակությանը՝ ապահովելով, որ գալիք ընտրությունները հանդիսանան հասարակության և կառավարության միավորման գործընթաց:

9 մարտի 2006 թ.